ԳԼՈՒԽ Ը.

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԳՆԴ. ՀԱՍԿԵԼԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1919 թուականի Հայաստանի ներքին կեանքի ամենացաւոտ երևոյթը մահմետական հակապետական շարժումներն էին՝ կազմակերպուած Թիւրքիայի և Ադրբէջանի ձեռքով՝ Հայաստանի անկախութիւնը խորտակելու դիտաւորութեամբ:

Հայաստանի Հանրապետութեան գոյութեան առաջին օրից իսկ երկրի ներսը ապրող և Ադրբէջանի ու Թիւրքիայի մահմետական տարրը թշնամական դիրք բռնեց դէպի հայ պետականութիւնը: Ներքին թրքութիւնը չէր ուզում հաշտուել Հայաստանի անկախութեան հետ և ձգտում էր միանալ կա՛մ Ադրբէջանին, կամ Թիւրքիային: Ադրբէջանն ու Թիւրքիան էլ, իրենց հերթին, աշխատում էին միմեանց ձեռք մեկնել, միանալ Հայաստանի վրայով: Միութեան կամուրջ պէտք է լինէր Ղարաբաղ—Զանգեզուր—Նախիջևան շերտը, թերևս, և Սուրմալուն ու Կարսը:

Թիւրքերի պարտութիւնից ու Կովկասից հեռանալուց յետոյ, Թիւրք հրամանատարութեան դրդումով, Հայաստանում ու Վրաստանում, ամէն տեղ — Աջարիա, Ախալցխա, Կարս, Սուրմալու, Շարուր—Նախիջևան և այլն — կազմուեցին տեղական «անկախ հանրապետութիւններ» իրենց կառավարութիւններով՝ «չուրա»-ներով և սկսեցին պայքարել Հայաստանի ու Վրաստանի տիրապետութեան դէմ: Հայաստանի հողի վրա կային «Արևմտեան Կովկասի Հանրապետութիւնը» Կարսի «չուրա»-յով և Արևելեան Կովկասի կամ «Արաքսեան Հանրապետութիւնը», որի մէջ մտնում էին Սուրմալուն, Զանգի և Վեդի բասարները, Միլին, Շարուրն ու Նախիջևանը՝ Նախիջևան կենտրոնով: Այս «հանրապետութիւններից» իւրաքանչիւրը, իր հերթին, բաժանւում էր աւելի փոքր, դաւառական միութիւնների՝ իրենց տեղական «չուրա»-ներով: Այդ «հանրապետութիւնները» պահում էին սեփական «բանակներ»՝ զինուած թիւրքական թնդանօթներով, գնդացիրներով ու հրացաններով, թիւրք սպաների ու չաւուշների հրամանատարութեան տակ: Ադրբէջանը հայթայթում էր նրանց դրամը: Թիւրքիան և Ադրբէջանը ուղղութիւն էին տալիս նրանց գործունէութեան:

Հայաստանը ներսից պայթեցնելու համար մասնաւորապէս մեծ ճիգ էր թափում Ադրբէջանը, որը 1919թ. մարտին դիւանագիտական ներկայացուցչի պաշտօնով Երևան ուղարկեց իր մոլեռանդ համաթիւրքապաշտ